Արձանագրություն N 3
Գրենական ապրանքների ձեռքբերման «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/36» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի շարունակության

ք. Երևան

20.12.2017թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Աբրահամյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Քալանդարյան /գնահատող/, Գ. Սաֆարյան /գնահատող/
Գ. Խարբության /բացող/, Ա. Մնացականյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Գների նվազեցման բանակցություններին անցակացման մասին
(Ռ. Աբրահամյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 39-րդ կետի 5-րդ ենթակետի՝ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/36» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անցկացվող գնային առաջարկների նվազեցման բանակցություններին ծանուցված մասնակիցները չեն ներկայացել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/36» ծածկագրով ընթացակարգը որոշ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին

(Ռ. Աբրահամյան)

2.1 Հաշվի առնելով, որ ընթացակարգի **38,43,47,52,53,60,68,70,74** չափաբաժինների մասով հայտ ներկայացրած մասնակիցները չեն ներկայացել բանակցություններին՝ հանձնաժողովը որոշեց նշված չափաբաժինները հայտարարել չկայացած:

2.3 Հաստատել չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին ծանուցելու մասին

(Ռ. Աբրահամյան)

3.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ 20.12.2017թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

3.2 20.12.2017թ. ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել իրենց կողմից առաջարկվող ապրանքների՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը՝ համաձայն հրավերի 6.1 հավելվածի:

Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդ տեղը զբաղեցրած մասնակիցներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ռ. Աբրահամյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 3-րդ կետում նշված փաստաթղթերի ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 11:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ..... Ռ. Աբրահամյան

Անդամներ՝ ..... Մ. Քալանդարյան

..... Գ. Սաֆարյան

..... Գ. Խարբության

..... Ա. Մնացականյան

Քարտուղար՝ ..... Ա. Համբարձումյան